

ՏԱՐԵՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՇՈՎԻՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ ԱՂԵՏԸ ՇԱՏ ԾԱՆՐ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ Է ՈՂՋ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ»

Օգոստոսի 3-ին, կեսօրին, Ռաճա-Լեյխումի եւ Քվեմո Սվանեթի տարածաշրջանի Օնիի մու-նիցիպալիտետի Շովի ամառանոցային ավանում, լայնածավալ սելավահոսքեր մարդկային կյանքեր խլեց: Վնասվել են կամուրջներ, ծանապարհներ, զբոսաշրջային քոթեջներ եւ «Սանսետ Շովի» հյուրանոցը: Մասնագետների նախնական տվյալներով՝ լեռներից իջել է ավելի քան 5 մլն խմ հող: Աղետի վայրի ընդհանուր մակերեսը կազմել է 26 հա: Ներկա դրությամբ հայտնաբերվել է զոհվածների 24 դի, եւս 9 մարդ անհայտ կորած է համարվում:



Որոնողափրկարարական աշխատանքներին միացել են Վրաստանի ներքին գործերի նախարարության 2 ուղղաթիռ, շուրջ 400 փրկարար եւ

կինոլոգներ: Երկու օրվա ընթացքում հաջողվել է տարահանել 210 մարդու:


(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՃԱՎԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ

Վրաստանի Ռաճայի տարածաշրջանի Շովի հանգստավայրային ավանում տեղի ունեցած ողբերգության կապակցությամբ՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ցավակցական հեռագիր է հղել Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլուն:



Հեռագրում, մասնավորապես, ասված է. «Ձերոգերագանցություն. Խորապես ցնցված եմ Վրաստանի Ռաճայի շրջանում մարդ-



կային կյանքեր խլած եւ ավերածություններ պատճառած աղետից: Հայ ժողովրդի եւ Հայաստանի կառավարության, ինչպես նաեւ անձամբ իմ անունից ցավակցություն ու զորակցություն եմ հայտնում Ձեզ եւ եղբայրական վրաց ժողովրդին: Ջոհվածների հարազատներին ու մերձավորներին մաղթում եմ տոկոսություն եւ ոգու արիություն, իսկ վիրավորներին՝ շուտափույթ ապաքինում:

Այս ծանր պահին կիսուն ենք եղբայրական վրաց ժողովրդի խորը վիշտը:

Օգոստոսի 4-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլու հետ հեռախոսազրույցում, ցավակցություն է հայտնել իր գործընկերոջը, Վրաստանի կառավարությանն ու բարեկամ վրաց ժողովրդին եւ Հայաստանի կառավարության անունից աջակցություն առաջարկել տարերային աղետի դեմ՝ պայքարի եւ դրա հետեւանքների վերացման գործում:

Վիրահայոց թեմի կայք-էջում հրապարակվել է թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի ցավակցական հեռագիրը՝ Ռաճայի Շովի հանգստավայրում տեղի ունեցած սողանքի հետեւանքով զոհվածների ընտանիքներին ու հարազատներին:

«Վիրահայոց թեմի եկեղեցիներում աղոթք է բարձրացվում առ Աստված՝ անհայտ կորածների իրենց ընտանիքներ վերադառնալու, իսկ տուժածներին առողջություն պարգեւելու խնդրանքով», - ասված է հրապարակված հաղորդագրության մեջ:

Տարերային աղետի զոհերի հարազատներին իրենց անկեղծ վշտակցությունն են հայտնել «Վրաստանի» թերթի աշխատակիցները, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետսիստիկայի թատրոնի կուլեկտիվը:

Շովիում մարդկային զոհերի հանգեցրած տարերային աղետի կապակցությամբ իրենց ցավակցությունն են հայտնել աշխարհի բազում երկրների ղեկավարներ: Մասնավորապես, Վրաստանի կառավարությանը ցավակցություն են հայտնել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Թուրքիայի, Ադրբեջանի եւ մյուս երկրների ղեկավարներ, Հռոմի պապ Ֆրանցիսկ Առաջինը: Ցավակցական հեռագրերի հոսքը շարունակվում է:

ՏԱՐԵԼԻՑ

15 ՏԱՐԻ՝ ՌՈՒՄ-ՎՐԱՅԱԿԱՆ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԴԱՏԵՐԱԶՄԻՅ ՇԵՈՒ

Օգոստոսի 8-ին լրացավ ռուս-վրացական օգոստոսյան պատերազմի 15-րդ տարին: 2008 թվականի ամռանը Ցխինվալիի տարածաշրջանի շուրջ հակամարտությունը վերածեց հնգօրյա զինված դիմակայության՝ ռուսական զորամիավորումները ներխուժեցին Վրաստանի տարածք:



Ըստ տարբեր տվյալների՝ պատերազմական հինգ օրերին վրացական կողմը ունեցել է 412 կորուստ, Հարավային Օսեթիայի ինքնավար մարզի տարածքում գտնվող վրացական գյուղերի մոտ 80 հազար

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԶՈՒՄԲԵՐ ԴԱՏԻԱՇՎԻԼԻԻՆ ՇՆԵԳՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՈՒԹՅԱՄԲ ԸՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆ ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԸ

Օգոստոսի 5-ին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, դեսպանության առաջին քարտուղար Եվա Ահարոնյանը այցելեցին վրաց քաղաքական գործիչ Ջումբեր Պատիաշվիլին՝ ծննդյան օրվա կապակցությամբ:

կան օրվանից յուրաքանչյուր տարի դեկտեմբերի 7-ին Ջ.Պատիաշվիլին այցելում է Թբիլիսիի հայկական եկեղեցի՝ իր խոնարհունը բերելով երկրաշարժի զոհերի հիշատակին:

1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի օրերին, Ջ.Պատիաշվիլին Վրաստանի կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղարն էր: Նա առաջինը շտապեց աղետի

զոտի՝ իր աջակցությունը բերելով հայ ժողովրդին, հիմնելով եւ ղեկավարելով Վրաստանից ցուցաբերվող օգնության պետական հանձնաժողովը: Այդ ողբերգա-

կամության մեջ իր անջնջելի հետ- (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ 8-ՐԴ ԽԱՂԵՐ

ՄԱՐԶԱԿԱՆ ՏՈՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ, ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ, ՄԻՐՈՒ ԵՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԴԱՏԳԱՄՈՎ



ՕԳՈՍՏՈՍԻ 5-ԻՆ ԳՅՈՒՆՐԻԻ «ՇԻՐԱԿ» ՄԱՐԳԱՊԱՇՏՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ 8-ՐԴ ԽԱՂԵՐԻ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԷԻՆ ՄԵԼԵՈՆ ՄԱՎՈՐՅԱՆԸ, ՆԱԻՐԻ ԻՐԻՅՅԱՆԸ, ՎԱԴԻՆԱԿ ԱՐԶՈՒՄՆԱՆԸ, ԳԵՎՈՐԳ ԳՍԲՆԱՆԸ ԵՎ ՎԱՆ ԲԱՅԲՈՒԹՅԱՆԸ

Օգոստոսի 5-ին Գյումրիի «Շիրակ» մարզադաշտում տեղի ունեցավ Համահայկական 8-րդ ամառային խաղերի բացման հանդիսավոր արարողությունը: Այն մեկնարկեց Համահայկական նախորդ խաղերի մասին պատմող տեղեկատվական հոլովակով: Արարողությանը այլ երկրներից ժամանած պատվիրակների թվում էին Վրաստանի քաղաքները ներկայացնող Համահայկական խաղերի գործկոմի անդամ, «Վրաստան» թերթի խմբագիր, Վան Բայբությանը (Թբիլիսի), Ախալքալաքի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը, Նինոծմինդայի սակրեբուլոյի փոխնախագահ Վաղինակ Արզումանյանը, սակրեբուլոյի սպորտի հանձնաժողովի նախագահ Գեւորգ Չափանյանը:

Նախորդ Համահայկական յոթ խաղերի օրինակով, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը այս անգամ էլ ներկայացրեց խաղերում պատվիրակությունների շքերթը: Համահայկական 8-րդ խաղերին մասնակցելու հա-

մար Հայաստան է ժամանել 41 պետության 179 քաղաքի 7161 պատվիրակ: Ապա սկսվեց հանդիսավոր շքերթը, որի ընթացքում մարզադաշտ են մտնում Համահայկական 8-րդ ամառային խաղերի մասնակից քաղաքների պատվիրակությունները:



(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ԻՐԱՎԿԻ ՂԱՐԻԲԱՆՎԻԼԻ. «ՇԻՆԴԻՍԻԻ ՅԵՐՈՍՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԿՅԱՆՔԸ ԶՈՐԱԲԵՐԵՑԻՆ ՅԱՅՐԵՆԻՔԻ ՅԱՄԱՐ»

Օգոստոսի 11-ին, Շինդիսիի հերոսամարտի 15-րդ տարելիցին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին, պաշտպանության նախարար Ջուանշեր Բուրժուլաձեն հարգանքի տուրք մատուցեցին հերոսաբար զոհված 17 վրացի զինվորների հիշատակին:




հավասար բախման ժամանակ զոհվել է 17 վրացի զինվոր՝ Ալեքսանդր Օնիանին, Էմգար Ծիլոսանին, Վեփսվիա Ջիշկարիանին, Զվիադ Կացաձեն, Թեյմուրազ Բերիձեն, Իլիա Գաբուրիան, Իլիա Շեղաշվիլին, Իրակլի Ջանելիձեն, Կախա Կոչաձեն, Լեւան Մելքաձեն, Մարկո Բարամիան, Նիկոլոզ Փորջիձեն, Ռոման Ջոիձեն, Ռուսլան Ծուլաձեն, Ֆելիքս Կակաուրիձեն և Շմազի Կուպատաձեն:

- Նրանց հերոսական մահից անցել է 15 տարի, նրանք զոհաբերեցին իրենց կյանքը, հայրենիքի համար ամենաբանակ զոհաբերությունները եւ մեզ թողեցին մեծ հերոսության, նվիրումի, անձնագրողության պատմություններ, որոնց վրա պետք է մեծանա մեր ապագա սերունդը:

Գիտեք, որ Շինդիսիի ճակատամարտից հետո շատ մանրամասներ են ի հայտ եկել, թե ինչպիսի նվիրում են մեզ ցույց տվել մեր հերոս տղաները: Յակառակորդը կարծում էր, որ ամբողջ դիվիզիա է կռվում, մինչդեռ կռվողներն ընդամենը 17-ն էին, անձնագրողների մեկ դասակ: Սա վրացականության, անկոտորում ոգու, խիզախության եւ մեր երկրի հանդեպ սիրո օրինակ է,-հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:

Հիշեցնենք, որ Շինդիսիի մենամարտը տեղի է ունեցել 2008 թվականի օգոստոսի 11-ին: Ռուսական զորամասի հետ ան-



ԱՄՆ ԳՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ ՄԱՐԴԱՎԱՅԻՆ ԶՈՐՅԵՐՈՎ

Օգոստոսի 5-ի երեկոյան, հրաձգություն է տեղի է ունեցել Վաշինգտոն նահանգի հարավ-արեւելքում, Կոլումբիա շրջանում: Երեք մարդ զոհվել է, երկուսը՝ վիրավորվել: Զոհվածների թվում եղել են երկու տղամարդ էլ մեկ կին: Երկու տուժածներ հոսպիտալացվել են: Քաղաքի ոստիկանությունը տեղի ունեցածի վերաբերյալ հետաքննություն է անցկացնում:

ՌԻԿՐԱԻՆԱ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ՝ 28 ՄԻԼԻԱՐԴ ԴՈՒՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Ուկրաինան 2023 թվականի սկզբից 28 միլիարդ դոլարի ֆինանսական աջակցություն է ստացել գործընկերներից:

Այս մասին «Տելեգրամ»-ի իր պաշտոնական ալիքում գրել է Ուկրաինայի վարչապետ Դենիս Շմիգալը:

- Ուկրաինան ԵՄ-ից ավելի քան 11 միլիարդ դոլար է ստացել, ավելի քան 8 միլիարդ դոլար՝ ԱՄՆ-ից,- նշել է նա:

ԼԱՏՎԻԱ ՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՐԿՐԻՑ ՎՏԱՐՈՒՄ ԵՆ

Ընթացիկ տարվա սեպտեմբերին, Լատվիայի կառավարությունը երկրի տարածքում գտնվող Ռուսաստանի քաղաքացիներին մտադիր է վտարել երկրի տարածքից: Այդ մասին հայտարարվեց Սեյմի զադըթի եւ քաղաքացիության հանձնաժողովի նիստում:

Նշվեց, որ շուրջ 5-6 հազար Ռուսաստանի քաղաքացի չի հետեւում բնակության ստացման նոր կարգին եւ չի հանձնել պետական լեզվի քննությունը: Ուստի, նրանք երեք ամսվա ժամկետում պետք է թողնեն Լատվիայի տարածքը:

ԼԵՂԱՍԱՆ 10 ՅԱԶԱՐ ԶԻՆՎՈՐ ԲԵԼՆՈՒՄԻ ՍԱՐՄԱՆԻ ՎՐԱ

Լեհաստանի զինված ուժերը մտադիր են լեհ-բելառուսական սահմանին տեղակայել 10 հազար զինծառայողի: Այդ մասին հայտարարեց երկրի ազգային պաշտպանության նախարար Մարիուշ Բլաշչակը:

- Սահմանին կլինի մոտ 10 հազար զինվոր, 4 հազարն անմիջականորեն կօգնի սահմանի պահպանությանը, 6 հազարը կլինի տարածաշրջանում,- ասաց նա:

Լեհաստանը որոշել է լրացուցիչ ուժեղացնել ռազմական ներկայությունը լեհ-բելառուսական սահմանին Բելառուսի տարածքում «Վագներ» մասնավոր ռազմական ընկերության հայտնվելուց հետո, ինչպես նաեւ՝ բելառուսական երկու ռազմական ուղղաթիռների կողմից լեհական օդային սահմանի ենթադրյալ խախտման միջադեպից հետո:

ՆԻԳԵՐ ԶԵՎԱՎՈՐՎՈՒՄ Ե ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Նիգերի խռովարարների պարագլուխ, Չայրենիքի փրկության ազգային խորհրդի նախագահ Աբդուռահման Տիանին ստորագրել է հրամանագիր անցումային շրջանի նոր կառավարություն կազմելու մասին:

Հիշեցնենք, որ Նիգերի ընտրված նախագահ Մոհամեդ Բագուինը հուլիսի 26-ին ձերբակալվել էր իր պահակախմբի անդամների կողմից, որոնց աջակցություն էր հայտնել նաեւ բանակը:

Արեւմտյան եւ աֆրիկյան մի շարք երկրներ դատապարտել են հեղաշրջումը եւ կոչ են արել ազատ արձակել Մոհամեդ Բագուինին:

15 ՏԱՐԻ՝ ՌՈՒՄ-ՎՐԱՅԱՎԱՆ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԶԵՏՈ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

բնակիչ լքեց իր տունն ու համալրեց փախստականների ու բռնի տեղահանվածների շարքերը:

Օգոստոսի 11-12-ին, Ֆրանսիայի նախագահ Նիկոլյա Մարկոզիի միջնորդությամբ, ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւն ու Միխեիլ Սաակաշվիլին Վրաստանում մարտական գործողությունների դադարեցման մասին 6 կետից բաղկացած համաձայնագիր ստորագրեցին:

Հնգօրյա պատերազմից հետո Ռուսաստանը ճանաչեց Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի անկախությունը, Մոսկվայի եւ Թբիլիսիի միջեւ դիվանագիտական հարաբերությունները խզվեցին:

2023 թվականի օգոստոսի 8-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին, երկրի կառավարության անդամների ու խորհրդարանի պատգամավորների ուղեկցությամբ, այցելեցին Մուլաթթվերդիի գերեզմանատուն, որտեղ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին այնտեղ հուղակավորված, հայրեն-

նիքի միասնության եւ անկախության համար զոհվածների հիշատակին:

- 2008 թվականի օգոստոսյան պատերազմի սկզբից անցել է 15 տարի: Այսօր առանձնահատուկ օր է բոլորիս համար. ռուսական ռազմական ագրեսիան հանգեցրեց մարդկային ահռելի զոհերի, քաղաքացիական անձանց բռնի տեղահանմանը եւ մեր տարածքների ժամանակավոր օկուպացմանը, ինչը դեռեւս մնում է մեր երկրի ինքնիշխանության եւ հետագա զարգացման հիմնական մարտահրավերը: Այսօր եւս մեկ անգամ հարգելու ենք պատերազմում զոհված մեր հերոս զինվորների եւ խաղաղ բնակիչների վառ հիշատակը:

Մեր կառավարությունը հավատարիմ է մնում տարածքային ամբողջականության վերականգնման եւ երկրի վերամիավորման խաղաղ ճանապարհին: Մենք



առաջնորդվում ենք այն անասան համոզմունքով, որ խաղաղ, միասնական, ուժեղ, զարգացած Վրաստանը լավագույն հեռանկարն է վրացիների, օսերի, աբխազների եւ մեր հողի վրա ապրող բոլոր մարդկանց համար, եւ մենք ամուսն ենք ամեն ինչ, որպեսզի այդ երազանքը շուտով իրականություն դառնա,- ասաց Իրակլի Դարիբաշվիլին:

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԵՐՎԻԼԻ. «ՌՈՒՄԱՍՏԱՆԸ ԱԳՐԵՍՈՐ Է ԵՎ ԲՈՆԱԶԱՎԹԻՉ»



Վրաստանի նախագահ Սալոսե Զուրաբիշվիլին, ռուս-վրացական 2008 թվականի օգոստոսյան պատերազմի կապակցությամբ, տարածեց հայտարարություն, ըստ որի՝ պատերազմից 15 տարի անց, Ռուսաստանը շարունակում է բռնազավթված պահել Վրաստանի տարածքները:

Նախագահի խոսքով, Ռուսաստանը ագրեսոր է եւ բռնազավթիչ: 2008 թվականի պատերազմից հետո, ուսումնասիրելով բոլոր սկզբունքները, նա շարունակում է երկրի տարածքի 20 տոկոսի բռնազավթումը: Վրաստանը կպաշտպանի իր եվրոպական ուղին, խաղաղությամբ կվերականգնի տարածքային ամբողջականությունը եւ հանդես կգա ապակայունացման բոլոր փորձերի դեմ,- հայտարարեց երկրի նախագահը:

ՎՐԱՍԱՆ - ՅԱՅԱՍԱՆ

ԶՈՒՄԲԵՐ ՊԱՏԻԱՇՎԻԼԻՆ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Ե ՅԱՅԱՍԱՆԻ ԴԵՄՊԱՆ ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քը թողած հարգարժան գործիչը Ծերովանի ընտանեկան ամառանոցում, իր տիկնոջ՝ Թինայի, որդիների, թոռների ու ծոռների եւ ընկերների հետ, մշում էր ծննդյան 84-ամյակը:

Չայաստանի դեսպանը հայ ժողովրդի անունից շնորհավորեց ու բարեմաղթանքներ հղեց Ջումբեր Պատիաշվիլին՝ կրկին շեշտելով հայ ժողովրդի երախտիքի խորը զգացումն ու ակնածանքը: Դեսպանը թարգմանաբար ընթերցեց Երեւանում լույս տեսնող «Գարուն» գրական ամսագրում 80-ականների վերջին տպագրված լուսահոգի Վազգեն Սարգսյանի շնորհակալության ու գնահատանքի խոսքն ուղղված Ջումբեր Պատիաշվիլին, որը սիրով պահվում է Պատիաշվիլիների ընտանեկան գրադարանում:

Ջ.Պատիաշվիլին ջերմությամբ խոսեց վաղուց բարեկամ դարձած իր հայ

գործընկերների մասին՝ հիշելով հատկապես Կարեն Դեմիրճյանի, հայ-վրացական ընկերության խորհրդանիշ դարձած Ֆրունզիկ Սկրոչյանի հետ իր հաճախակի ու բարեկամական հանդիպումները՝ փաստելով դրանք սեփական հավաքածուում պահվող լուսանկարների եւ կենսագրական տարբեր դրվագների միջոցով: Հիշեց նաեւ երկրաշարժի արհավիրքը, իր մեկնումն աղետի գոտի ու հայ ժողովրդի բացառիկ տոկունությունն այդ օրերին:

Ջ.Պատիաշվիլին վերստին կարելուրեց ինչպես անցյալում, այնպես էլ՝ ներկայում եւ ապագայում հայ-վրացական եղբայրական սիրո եւ փոխհարգանքի անհրաժեշտությունը:

«Վրաստան» թերթը միանում է շնորհավորանքներին՝ հարգարժան Ջումբեր Պատիաշվիլին բարեմաղթելով առողջություն եւ անհոգ տարիների առատություն:



Զախից Աշոտ Սմբատյանը, Ջումբեր եւ Թինա Պատիաշվիլիները, Եվա Ահարոնյանը

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՍՏԱՅՎԱԿԱՆ 8-ՐԴ ԽԱՂԵՐ

ԹԲԻԼԻՍԻ ՆԱՎԱԲԱԿԱՆԸ ԱՐԴԵՆ ՆՎԱՃԵԼ Է ԵՐԿՈՒ ՈՍԿԵ, ՄԵԿԱԿԱՆ ԱՐԾԱԹԵ ԵՎ ԲՐՈՆՉԵ, ԱՆԱԼՔԱԼԱՔԻՆ՝ ՄԵԿ ԲՐՈՆՉԵ ՄԵՂԱԼՆԵՐ, ԻՍԿ ՆԻՆՈՍՄԻՆԳԱՅԻ ՖՈՒՏՉԱԼԻ ԹԻՄԸ ՄԵԿ ՈՒԹԵՐՈՐԳ ԵԶՐԱԹԱԿՉՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԺԱՍԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, օգոստոսի 5-ին, Գյումրիի «Շիրակ» մարզադաշտում, հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ Համահայկական 8-րդ խաղերի հանդիսավոր բացումը:

Խաղերի հենց առաջին շաբաթում իր չենսպիտակապես մեկնարկով ուրախացրեց իրացանով հրաձգային մրցույթի մասնակից, թբիլիսցի Կարեն Նանույանը: Գերազանցելով մրցակիցներին, նա արժանացավ խաղերի չենսպիտակ կոչման: Նշենք, որ սա Կարենի առաջին լուրջ մրցաշարն էր իր մարզական կարիերայում:

Թբիլիսիի հավաքականի գանձարկը ոսկե են արժաքե մեդալներով համալրեց փետրագնդակի մրցաշարի մասնակից Մարիա Խաչատրյանը: Նա զուգամրցույթում, երեւանցի Չերմինե Չավարյանի հետ, արժանացավ ոսկե, իսկ մենամրցաշարում՝ արժաքե մեդալի: Փետրագնդակի մրցաշարում բրոնզե մեդալի արժանացավ թբիլիսցի Լուկա Նինոշվիլին:

Օգոստոսի 6-ին, խաղերի շրջանակներում, Գյումրիում անցկացված մարզական պարերի մրցույթում աչքի ընկան Թբիլիսիի պարային դպրոցի Համլետ Մանուկյանի սաներ՝ Միլանա Ավետիսովան եւ Միա Գրիգորյանը: Մարզական պարերի մրցաշարի մասնակիցների էտաֆետը շարունակեցին լողորդներ Ռեզինա Մեիրաբովան եւ Գուրամ Դարդարաշվիլին, ովքեր արժանացան դիպլոմների եւ մարզական միավորներ բերեցին թբիլիսյան մարզական թիմին:

Թիմի գանձարկում միավորներ գրանցեց նաեւ բազմամարտի մրցաշարի մասնակից, թբիլիսցի Արմեն Հարությունյանը:

Տարբեր արժողության մեդալների համար կշարունակեն պայքարը թեթևատետներ՝ Համազասպ Մամիկոնյանը (1500 եւ 5000 մետր վազք), Անդրոն Եւ Նատալի Գրիգորյանները (համապատասխանաբար՝ 100 մետր վազք եւ եռացատկ, երկարության թռիչք), Ալեքսանդր Մարությունյանը (նիզակի նետում), շախմատիստ Սամվել Մուրադյանը:

Նիմոնիմոնայի ֆուտզակի թիմը, իր ենթախմբում խմբային մրցաշարից մեկ տուր առաջ, հավաքելով 9 միավոր, նվաճեց խաղերի մեկ ութերորդ եզրափակչի ուղեգիր:

Մարզական շաբաթվա ընթացքում պատվավոր մրցանակի համար պայքարը շարունակելու իրավունքից զրկվեցին Թբիլիսիի ֆուտբոլի, ֆուտզակի եւ կանոն վոլեյբոլի թիմերը: Ընդ որում, անհաճ միջադեպ տեղի ունեցավ Թբիլիսի-Աշտարակ եւ Ախալքալաքի-Բուենոս Այրես ֆուտբոլային հանդիպումներում: Առաջին հանդիպմանը, գլխավոր մրցավարին ֆիզիկական վիրավորանք հասցնելու համար, որակագրկվեց թբիլիսյան թիմի դարպասապահ Գ.Աբուլաշվիլին, ընդ որում թբիլիսցիները պարտվում էին 1:4 հաշվով, իսկ Ախալքալաքի-Բուենոս Այրես հանդիպմանը, նախորդ հանդիպման ժամանակ կարմիր քարտ ստացած խաղացողի դաշտում հայտնվելու կապակցությամբ, ախալքալաքցիներին գրանցվեց տեխնիկական պարտություն (ախալքալաքցիները խաղը շահում էին 1:0 հաշվով):

Համահայկական խաղերի առաջին շաբաթվա արդյունքներով, պարզեցնելու համար պայքարը կշարունակեն սեղանի թենիսի եւ փետրագնդակի թբիլիսյան թիմերը:

ՎԱՆԵՐԻ ՀՈՒՄԱՆՅԱՆՑ Մեր հատուկ թղթակից



ՔԵԹԵՎԱՆ ԴՈՒՄԲԱՉԵՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՏԱՆ ԴԵԿԱՎԱՐ

Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարարի իրամանով սեպտեմբերի 4-ից Քեթեվան ԴումբաՉեն կղեկավարի Վրաստանի գրողների տունը:



Քեթեվան ԴումբաՉեն ներկայումս Վրաստանի խորհրդարանի մշակույթի հանձնաժողովի նախագահի տեղակալն է, Սփյուռքի եւ Կովկասի հարցերով հանձնաժողովի անդամ, 2023 թվականի աշնանային նստաշրջանում, օրենքի համաձայն, կղաղարեցվի Վրաստանի խորհրդարանի պատգամավորի պաշտոնը:

Քեթեվան ԴումբաՉեն, տարբեր պաշտոններ է զբաղեցրել Գրողների միության գրական թարգմանության եւ գրական կապերի գլխավոր խմբագրությունում, հեռուստատեսությունում, Վրաստանի նախագահի մամուլի ծառայությունում, եղել է Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարի խորհրդակալ, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության փորձագետ, ինչպես նաեւ գրական եւ կրթական նախագծի ղեկավար:

Խորհրդարանում Քեթեվան ԴումբաՉեի տեղը կուսակցության ցուցակում փոխարինում է Քեթեվան Չարկվանին:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿԱՄԱՆ ԿՈՒՐՍԸ (11 օգոստոսի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Table with 2 columns: Տարադրամ (Foreign Currency) and Լարի (Lari). Rows include 1 ԱՄՆ ԴՈԼԱՐ (2.6315), 1 ԵՎՐՈ (2.9015), 100 ՌՈՒՔԼԻ (2.6984), 1000 ԴՐԱՄ (6.8128).

ԱՌՈՂՋԱՊԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ ԲԱՂՅԿԵՂՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետի նախաձեռնությամբ ընդունվել է որոշում, ըստ որի՝ պետությունը լրիվությամբ ֆինանսավորում է ուռուցքային ախտորոշմամբ՝ մինչեւ 18 տարեկան հիվանդների արտասահմանում բուժման բոլոր ծախսերը:

Օրերս հրապարակվեց Վրաստանի կառավարության նոր նախաձեռնությունը, ըստ որի՝ Վրաստանում քաղցկեղով ախտորոշված բոլոր հիվանդները ֆինանսավորվելու են հորմոնալ թերապիա, քիմիաթերապիա, ճառագայթային թերապիա եւ դեղամիջոցներով: Այդ մասին տեղեկացրել է Վրաստանի առողջապահության նախարարության մամլո ծառայությունը:

«Նրանք թվում են այն հիվանդները, որոնց տարեկան եկամուտը գերազանցում է 40 հազար լարին, մինչ փոփոխությունը՝ նրանք համար այդ ծառայությունները չեն ֆինանսավորվում: Փոփոխությունը կտարածվի նաեւ ապահովագրված վետերանների վրա»,- ասված է առողջապահության գերատեսչության տարածած հաղորդագրության մեջ:

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՍԱՄՅԻՆԵ-ՉԱՎԱԽԵԹՈՒՄ



Սամցխե-Չավախեթի տարածաշրջանի պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլու գլխավորությամբ, անցկացվեց տարածաշրջանում ընդգրկված մունիցիպալիտետների քաղաքապետների հետ հանդիպում: Հանդիպմանը, որին մասնակցեցին պետական լիազորի առաջին տեղակալ՝ Դավիթ Վարդիաշվիլին, տարածաշրջանային նախագծերի կորդինավորման ծառայության պետ Մարիա Գաչեչիլաձեն, տեղական ինքնակառավարման մարմինների հետ կապերի ծառայության ղեկավար Սոսո Ալիբեգաշվիլին, տարածաշրջանում ընդգրկված վեց մունիցիպալիտետների քաղաքապետներ, Ախալցխեի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Դավիթ Լոմիձեն, քննարկվեցին տարածաշրջանի ծախսերի ընթացող ենթակառուցային նախագծերը, դրանց կատարման ժամկետները՝ ըստ պլան-ժամանակացույցի, անօդեւան կենդանիների համար միջմունիցիպալ կացարան կառուցելու անհրաժեշտությունը:

ՄԱՌՆԵՈՒԼԻ. ԾՐԱԳՐՎՈՒՄ Է ՆՈՐ ՏՈՆԻ՝ «ՄԱՌՆԵՈՒԼՈՒԲԱՅԻ» ԱՆՅԿԱՅՈՒՄ

Մառնեուլիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի որոշմամբ, ծրագրվել է սահմանել Մառնեուլի քաղաքի տունը՝ «Մառնեուլոբան»: Միջոցառման հիմնական նպատակը Մառնեուլիի բազմազանությունը ներկայացնելն է:

Տունը կանցկացվի Մառնեուլիի կենտրոնական հրապարակում, որտեղ քաղաքապետարանի տարբեր գյուղերից քաղաքացիները հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց ավանդույթները:

Միջոցառումը կանցկացվի սեպտեմբեր ամսին, իսկ օրը կընտրվի ավելի ուշ:

ԱՄՊԻՆՁԱ. «ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԲՐՈՒՅԵԼՅՈՉՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ 34 ԴԵՊՔ»

Ասպինձայի մունիցիպալիտետում հայտնաբերվել է բրուցելյոզով հիվանդ 34 մարդ:

Ինչպես տեղեկացրել է տարածաշրջանային «Հարավային դարպաս» թերթին Ասպինձայի առողջապահության կենտրոնի ղեկավար Սգիա Պապաշվիլին, բոլոր վարակվածները բուժվում են տանը: Նրա խոսքով, բացի այդ, Սաղուրդաթելի, Չվեչի եւ Օրգորա գյուղերում անցկացվում են կանխարգելիչ աշխատանքներ:

Յիշեցնենք, որ բրուցելյոզը անասուններից մարդուն անցնող վարակ է, այս տարի մարդկանցից բացի, հայտնաբերվել են նաեւ հիվանդ անասուններ:

ԱՂՔՅՈՐՓԻ ԵՎ ԽՈԺՈՒՆԻ ԵՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՉՆԵՐԸ ԿՎԵՐԱՆՈՐՈՎԵՆ

Քվեմո Բարթիլի մարզի Մառնեուլիի մունիցիպալիտետի հայաբնակ Աղքյորփի եւ հայերով ու ադրբեջանցիներով բնակեցված Խոժոռնի գյուղերում 2024 թվականին ներքին ճանապարհները կվերականգնվեն:

Աղքյորփի գյուղի ներքին ճանապարհների վերականգնման աշխատանքների համար՝ Մառնեուլիի քաղաքապետարանը հատկացրել է 281 հազար 538 լարի եւ 68 թեթրի, իսկ Խոժոռնի գյուղի ներքին ճանապարհների վերականգնման աշխատանքների համար՝ 435 հազար 549 լարի եւ 42 թեթրի:

Բացի այս երկու գյուղերից, Մառնեուլիի քաղաքապետարանը 2024 թվականի ընթացքում շրջաններում իրականացվելիք ծրագրերի հիմնադրամի ֆինանսավորմամբ նախատեսում է եւս 7 գյուղերի ճանապարհների վերականգնում: Ընդհանուր առմամբ, Մառնեուլիի քաղաքապետարանը նախատեսում է 2024 թվականին ենթակառուցային նախագծերի վրա ծախսել 21 մլն 580 հազար 300 լարի:

Քաղաքապետարանի ֆինանսաբյուջետային վարչության պետ Կորա Չխիտունիձեի խոսքով, այսօրվա տվյալներով, Մառնեուլիի մունիցիպալիտետի 2024 թվականի բյուջեն կազմում է 60 մլն 050 հազար լարի:

Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ՏԱՐԵՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՇՈՎԻՏԻՍ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ ԱՂԵՏԸ ՇԱՏ ԾԱՆՐ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ Է ՈՂՋ ԵՐԿՐԻ ՀԱՍԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի վարչապետի որոշմամբ, օգոստոսի 7-ը հայտարարվել էր սգո օր՝ ի հիշատակ Շովի հանգստավայրում տեղի ունեցած բնական աղետի զոհերի: Այդ օրը ժամը 00:00-ից մինչև օգոստոսի 8-ի ժամը 00:00-ն Վրաստանի ողջ տարածքում պետական դրոշները իջեցվել են:

Տարերքից երկու ժամ անց՝ Շովիում էին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին, Վրաստանի կառավարության անդամները, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն: Համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչները կազմով ստեղծվել է տարերային աղետի հետևանքների վերացման շտաբ, որն անմիջապես ձեռնամուխ է եղել մարդկանց տեղահանման ու տարահանման, աղետի հետևանքների վերացման աշխատանքներին:

- Ցանկանում եմ իմ եւ կառավարության անունից հայտնել մեր վշտակցությունը, սարսափելի ողբերգություն է, որը տեղի ունեցավ Շովիում, այն ցնցեց ողջ Վրաստանը, ուստի, եւս մեկ անգամ ուզում եմ մեր ցավակցությունը հայտնել զոհերի ընտանիքներին,- ասաց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին եւ հավելեց, որ Շովիում տեղի ունեցածը շատ ծանր փորձություն է ողջ երկրի համար:

- Կառավարությունն առաջին րոպեներից ներգրավված էր: Աշխատանքներն իրականացնում էին մեր հերոս փրկարարները՝ մոտ 400 հոգի: Աղետի գոտուց անվնաս դուրս են բերվել մեր 210 հայրենակիցներ: Շեշտեմ նաեւ մեր հերոս զինվորներին, ովքեր միացել են գործին՝ օգնելով մեր փրկարարներին: Բժիշկները նույնպես տեղում էին: Մոբիլիզացված էր հարյուրից ավելի հատուկ տեխնիկա: Քարտեզներ ինքն էլ դեկավարել այդ աշխատանքները: Մեկ անգամ եւս ուզում եմ ասել, որ սա ծանր փորձություն է բոլորիս համար եւ նորից ուզում եմ իմ ցավակցությունը հայտնել մահացածների ընտանիքներին,- ասաց վարչապետը:

ՎՐԱՍՏԱՆԸ ԱՅՍՕՐ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂՁԱԶԱՐՄԱՆ ՀԱՍԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԽՆԳԻՐ ԶՈՒՆԻ

Շովիում տեղի ունեցած տարերային աղետի կապակցությամբ՝ վրաց ժողովրդին իրենց ցավակցությունն ու օգնության պատրաստակամությունն են հայտնել բա-



Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլի

զում երկրների ղեկավարներ: Վրաստանի կառավարությունը շնորհակալությամբ ընդունելով ցավակցությունները, հայտարարեց, որ իր ուժերով կհաղթահարի տարերքի հետևանքները:

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլու խոսքով՝ երկիրը ռեսուրս-տարերքի հետևանքները: - Դուք գիտեք, որ պետական բոլոր գերատեսչությունները ներգրավված են Շովիում: Ուզում եմ հստակ եւ ընդգծված ասել, որ երկիրն այսօր ռեսուրսների խնդիր չունի,- հայտարարեց Լեւան Դավիթաշվիլին հավելելով, որ իրոք անհնար է կանխել բնական տարերքը: - Նման պատահարներ լինում են ոչ միայն Վրաստանում, այլեւ ցանկացած զարգացած երկրում: Շատ տխուր է, որ երբեմն մարդիկ, համակարգերը, պետական կառույցները կամ երկրներն ընդհանրապես անգործ են կանխելու բնական աղետներից,- ասաց Լեւան Դավիթաշվիլին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔԵԻ ԿԱՐԻՔ ԶԿԱ

Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին, սոցցանցերում բանկային հաշիվներ են հրապարակվել, փող հավաքելու կոչ կա, բնակչությանն ուզում են ասել, որ գումար հավաքելու, ֆինանսական օգնության կարիք չկա:

- Սոցցանցերում հրապարակվել են որոշ բանկային հաշիվներ, գումար հավաքելու կոչ կա, դրանց թվում երկու տարբեր էջերում տեսել եմ նույն բանկային հաշիվը, չեմ ուզում կասկածել որեւէ մեկի անկեղծությանը, բայց, իհարկե, խարդախության մեծ ռիսկ կա,- ասաց Շավլա Պապուաշվիլին:



Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլի

ՇՈՎԻՏԻՍ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՐ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՍՏՎՈՒՄ

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը քրեական գործ է հարուցել Ռաճայի բարձրլեռնային երկրամասի Շովի առողջարանային ավանում 24 մարդու կյանք խլած սողանքի առնչությամբ:

- Միջադեպի առաջին իսկ րոպեներից սկսվել է քրեական հետաքննություն: Գործը հարուցվել է երկու հողվածով, սակայն հետաքննության ընթացքում հողվածները կարող են վերաորակվել,- հայտարարել է ԼԳՆ արտակարգ իրավիճակների կառավարման ծառայության ղեկավար Թեյմուրազ Մղեբրիշվիլին եւ հավելել, որ գործը հարուցվել է Վրաստանի Քրեական օրենսգրքի 116-րդ (անգոգուշությամբ մահ պատճառելը) եւ 240-րդ (անվտանգության կանոնների խախտում հանքային, շինարարական կամ այլ աշխատանքներ կատարելիս) հողվածներով:

Նշենք, որ ծառայական պարտականությունների կատարման ժամանակ սրտի կաթվածից զոհվել է Ամբրոլաուրիի շրջանային բաժնի հետաքննիչ Միրիան ճեղիձեն:

«Ոստիկանության մայրը, Օնիի մունիցիպալիտետում իր պարտականություններն էր կատարում, բնական աղետի գոտում, փրկարարական միջոցառումների շրջանակում, պաշտպանում էր հասարակական կարգը: Դժբախտաբար, կորցրել է գիտակցությունը եւ հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել», - ասված է ԼԳՆ հաղորդագրության մեջ:

ՎԱՐՉԱՂԵՏԻ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՐ ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՆԱՐՈՒՆԱԿԵՆ ԱՅՆՔԱՆ, ՔԱՆԻ ԴԵՌ ԱՆՆԵՏ ԿՈՐԱԾՆԵՐ ԿԱՆ

Արտակարգ իրավիճակների կառավարման ծառայության ղեկավար Թեյմուր Մղեբրիշվիլին հայտարարեց, որ աշխատանքները կշարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ անհետ կորածներ կան:

- Կան ողջամիտ ժանկետներ՝ հիմնված վերլուծությունների վրա, որոնք կարող են արվել աղետի կոնկրետ վայրերում, սակայն վարչապետի եւ ներքին գործերի նախարարի թելադրանքով որոնողական աշխատանքները կշարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ չեն հավանականություն կա գտնելու, ցավով պետք է նշեմ, բայց՝ մահացածի մարմինը: Մենք պարտավոր ենք, հետևողական լինել այս ծանր իրողության մեջ,- ասաց Թեյմուր Մղեբրիշվիլին:

ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՆ, ՈՐ ԱՂԵՏԻՑ ԱՌԱՋ ԶՐԻ ԼՃԱՅԱՆ ԱՊԱՆՈՒՅՆԵՐ ԶԵՆ ԵՂԵԼ

Շովի հանգստավայրում տեղի ունեցած ողբերգական աղետի կապակցությամբ՝ Վրաստանի շրջակա միջավայրի ազգային գործակալությունը տարածել է տեղեկատվություն, ըստ որի՝ մինչ աղետը կամ աղետի ժամանակ Բուբիստղալի գետի հովտում կուտակումներ չեն եղել:

«Մենք ստացել ենք բարձր լուծաչափով արբանյակային պատկերներ, որոնք նկարագրում են հաստատում են, որ նախքան աղետը հովտում ջրի հատման ապացույցներ չկան: Սա եւս մեկ անգամ ցույց է տալիս, թե որքան կարեւոր է փորձագետների համար գնահատական տալ խնդրին եւ դրանից հետո խոսել հանրության հետ», - ասված է հաղորդագրության մեջ եւ նշված, որ սառցադաշտաբանական եւ քարքարոտ գործընթացները բարդ բնույթ են կրում, եւ անհնար է որոշել բարբարոտ, սառցադաշտային զանգվածների փլուզման ճշգրիտ ժամանակը եւ վայրը:

«ՀԻԻԱ Շրջակա միջավայրի ազգային գործակալության առաջին զեկույցում հստակ ասվում է, որ մինչ աղետը կամ աղետի ժամանակ Բուբիստղալի գետի հովտում կուտակումներ չեն եղել: Գործակալության մասնագետները դա հաստատել են Բուբիստղալի գետի եւ Չանչախա գետի միախառնման կետում գտնվող ջրի մակարդակի դիտարկման կայանի հետ, սակայն նախնական եզրակացության պատրաստմանը զուգահեռ, մեր մասնագետները շարունակել են վերլուծել տարբեր տեղեկություններ: Մենք ստացել ենք բարձր լուծաչափով արբանյակային պատկերներ, որոնք նկարագրում են հաստատում են, որ նախքան աղետը հովտում ջրի հատման ապացույցներ չկան: Սա եւս մեկ անգամ ցույց է տալիս, թե որքան կարեւոր է հարցը մասնագետների կողմից գնահատել, ապա՝ խոսել հանրության հետ: Արբանյակային տվյալների հիման վրա

վերլուծված նյութից պարզ երևում է, որ Բուբիստղալի գետի հովտում, Բուբա սառցադաշտից արեւմուտք, փլուզվել է մոտ 500 հազար խորանարդ մետր ժայռային զանգված: Ժայռային ձմախուսի փլուզման հետևանքով կոտրվել է մոտ 62 հա վրա տարածված սառցադաշտային զանգվածը, որն առաջացրել է եթասառցադաշտային ջրերի արտահոսք (ջրի ծավալը որոշելու համար կատարվում են լրացուցիչ ուսումնասիրություններ): Սա

ՈՐՏԵՂ Ե ԳՏՆՎՈՒՄ ՇՈՎԻՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՏԵՂԾՎԵՑ ԱՅՐ ՀԱՆԳՏԱԿԱՅՐԸ

Շովի հանգստավայրը գտնվում է Ռաճա-Լեխյուսի եւ Քվեմո Սվանեթիի տարածաշրջանի Օնիի մունիցիպալիտետում, Ռիոնի գետի ձախ վտակի՝ ճանճախի գետակի կիրճում, Օսեթիի ռազմական ճանապարհին, ծովի մակարդակից 1500 մետր բարձրության եւ Օնի քաղաքից 30 կիլոմետր հեռավորության վրա: Շովի հանգստավայրը ստեղծվել է Ամբրոլաուրիի շրջանի ճկաղիսի գյուղում՝ 1876 թվականին ծնված բժիշկ Շամշե Լեժավայի ջանքերով: Շամշե Լեժավայն բժշկական կրթությունը ստացել է 1905-1910 թվականներին, Վիեննայի համալսարանում: Եվրոպայում գտնվելու տարիներին ուսումնասիրել է Ալանդի, Դավոսի, Վիլդուոգեն, Բադենի, Կարսբադի, Վալենսիայի, Աուգեն եւ մյուս հանգստավայրերը: 1913 թվականից Լեժավայն սկսեց աշխատել Ռաճայում հանգստավայրի հիմնման հարցի շուրջ: 1925 թվականին դրվեց այդ վայրում առաջին հանգստատան շինարարության հիմքը: Մի քանի տարվա ընթացքում տեղում կառուցվեցին էլեկտրակայան, հանգստավայրի սպասարկման անձնակազմի բնակության տուն, պոլիկլինիկա, երկրորդ հանգստատունը: Հանգստավայրը պաշտոնապես բացվեց 1929 թվականին եւ, ի պատիվ հիմնադիր Շամշե Լեժավայի, հիմնադրվեց 1937 թվականին դարձավ ստալինյան բռնադատման զոհ: Հիմնադրի ձեռնարկությունից հետո, հանգստավայրի անվանումից «շամ» նախածանցը հանվեց եւ անվանվեց դարձավ Շովի: Նշենք, որ 1956 թվականին Շամշե Լեժավայն լրիվությամբ արդարացվեց: Օգոստոսի 3-ի տարերքից, Շովիում առանձնակի տուժել է «Սանսետ Շովի» հյուրանոցը: Նշենք, որ 2012 թվականին հյուրանոցի 100 տոկոսի բաժնետերը սահմանափակ պատասխանատվության froferTi menegment ընկերությունն է, որի սեփականատերը Վրաստանի քաղաքացի Իրակլի Քափիանիձեն է: Ավելացնենք, որ «Սանսետ Շովի» հյուրանոցը գտնվում է ծովի մակարդակից 1600 մետր բարձրության վրա՝ Թբիլիսիից 265 կմ հեռավորության վրա: Հյուրանոցն ուներ 30 համար եւ երկու քրթեջ:

եւս մեկ անգամ հաստատում է Շրջակա միջավայրի ազգային գործակալության առաջին զեկույցում տված գնահատականները, աղետի բարդությունն ու այն կանխատեսելու անհնարինությունը: Բացի այդ, հարկ է նշել, որ օդերեւութաբանական կայանից եւ օդերեւութաբանական ռադարից ստացված տվյալների համաձայն՝ հովտում, բարձր ինտենսիվ տեղումներ չեն դիտվել:

Ինչ վերաբերում է հովտում զարգացած սառցադաշտաբանական եւ ժայռային գործընթացներին, ապա, ինչպես վերը նշեցինք, դրանք բարդ բնույթ են կրում, եւ ժայռային եւ սառցադաշտային զանգվածների փլուզման ստույգ ժամանակն ու վայրը հնարավոր չէ որոշել», - ասված է Շրջակա միջավայրի ազգային գործակալության հաղորդագրության մեջ:

ՇՈՎԻՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՏԵՂԾՎԵՑ ԱՅՐ ՀԱՆԳՏԱԿԱՅՐԸ



ՇՈՎԻՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՏԵՂԾՎԵՑ ԱՅՐ ՀԱՆԳՏԱԿԱՅՐԸ

Շովի հանգստավայրը գտնվում է Ռաճա-Լեխյուսի եւ Քվեմո Սվանեթիի տարածաշրջանի Օնիի մունիցիպալիտետում, Ռիոնի գետի ձախ վտակի՝ ճանճախի գետակի կիրճում, Օսեթիի ռազմական ճանապարհին, ծովի մակարդակից 1500 մետր բարձրության եւ Օնի քաղաքից 30 կիլոմետր հեռավորության վրա: Շովի հանգստավայրը ստեղծվել է Ամբրոլաուրիի շրջանի ճկաղիսի գյուղում՝ 1876 թվականին ծնված բժիշկ Շամշե Լեժավայի ջանքերով: Շամշե Լեժավայն բժշկական կրթությունը ստացել է 1905-1910 թվականներին, Վիեննայի համալսարանում: Եվրոպայում գտնվելու տարիներին ուսումնասիրել է Ալանդի, Դավոսի, Վիլդուոգեն, Բադենի, Կարսբադի, Վալենսիայի, Աուգեն եւ մյուս հանգստավայրերը: 1913 թվականից Լեժավայն սկսեց աշխատել Ռաճայում հանգստավայրի հիմնման հարցի շուրջ: 1925 թվականին դրվեց այդ վայրում առաջին հանգստատան շինարարության հիմքը: Մի քանի տարվա ընթացքում տեղում կառուցվեցին էլեկտրակայան, հանգստավայրի սպասարկման անձնակազմի բնակության տուն, պոլիկլինիկա, երկրորդ հանգստատունը: Հանգստավայրը պաշտոնապես բացվեց 1929 թվականին եւ, ի պատիվ հիմնադիր Շամշե Լեժավայի, հիմնադրվեց 1937 թվականին դարձավ ստալինյան բռնադատման զոհ: Հիմնադրի ձեռնարկությունից հետո, հանգստավայրի անվանումից «շամ» նախածանցը հանվեց եւ անվանվեց դարձավ Շովի: Նշենք, որ 1956 թվականին Շամշե Լեժավայն լրիվությամբ արդարացվեց: Օգոստոսի 3-ի տարերքից, Շովիում առանձնակի տուժել է «Սանսետ Շովի» հյուրանոցը: Նշենք, որ 2012 թվականին հյուրանոցի 100 տոկոսի բաժնետերը սահմանափակ պատասխանատվության froferTi menegment ընկերությունն է, որի սեփականատերը Վրաստանի քաղաքացի Իրակլի Քափիանիձեն է: Ավելացնենք, որ «Սանսետ Շովի» հյուրանոցը գտնվում է ծովի մակարդակից 1600 մետր բարձրության վրա՝ Թբիլիսիից 265 կմ հեռավորության վրա: Հյուրանոցն ուներ 30 համար եւ երկու քրթեջ: